



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**

Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



ՀԱՅՑ. ԱՌԱՋ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՅ ԵՂԲԱՅՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՀԵՏ ՏԵՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՅՈՒՆ

**ՀՈԳԵՒՐ ԿԵԱՆՔԸ ՊԵՏՔ Է ՇՈՂԱՐՁԱԿԷ ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ԸՆԴՄԵՋԵՆ**

ԸՍԱԲ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ

Հինգշաբթի, 19 Հոկտեմբերի առաւօտուն, Էսսինոյի մէջ Առաջնորդ Սրբազանը՝ Բարձր. Տ. Սուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, ընդունեց Հայց. Առաք. Եկեղեցւոյ Եկեղեցասիրաց Եղբայրակցութեան Վարչութեան անդամները: Հանդիպման, Առաջնորդ Սրբազան Հօր կողքին, կը մասնակցէր նաեւ Զրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն՝ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան, որ Սրբազան Հօր տնօրինումով, Առաջնորդարանին եւ Եղբայրակցութեան միջեւ եղող համագործակցութեան համադրիչ կապն է:

Հանդիպման ընթացքին Վարչութեան անդամները Սրբազան Հօր համապարփակ ձեւով ներկայացուցին Եղբայրակցութեան տարած աշխատանքները հոգեւոր մարզէն ներս եւ պարզեցին իրենց կատարելիք նոր ծրագիրները: Առաջնորդ Սրբազան Հայրը իր կարգին մեծապէս գնահատեց անոնց ունեցած անսակարկ նուիրումը Հայց. Առաք. Եկեղեցւոյ հանդէպ, ինչպէս նաեւ անոնց տարած աշխատանքը՝ ի խնդիր Հայ նոր սերունդի հոգեւոր դաստիարակութեան աճման ու զարգացման: Սրբազանը նաեւ վերաշեշտեց, թէ Եկեղեցասիրաց Եղբայրակցութիւնը կը վայելէ Թեմիս անվերապահ գործակցութիւնը եւ աջակցութիւնը եւ ամբողջական զօրակցութիւնը:

Յայտնենք, որ Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինումով միաբան հայրերը յաճախակի կ'այցելեն Եղբայրակցութեան կեդրոնը եւ զանազան առիթներով կը դասախօսեն մեր հաւատացեալ ժողովուրդին: Այս հանգրուանին եւս, հանդիպման ընթացքին, Եղբայրակցութեան Վարչութիւնը խնդրեց հովանաւորութիւնը Առաջնորդ Սրբազան Հօր՝ Գոհաբանութեան տօնին առթիւ կազմակերպելիք իրենց ձեռնարկին, 20 Նոյեմբերին:

Իսկ Շաբաթ օր, 21 Հոկտեմբերի երեկոյեան, Եղբայրակցութեան կեդրոնէն ներս երիտասարդաց խմբակին պիտի դասախօսէ Հայր Պարթեւը, նիւթ ունենալով՝ «Հայ Եկեղեցին եւ Հալօււիսի տօնը»:

*DURING A MEETING WITH THE ARMENIAN ECCLESIASTICAL BROTHERHOOD*

**SPIRITUALITY MUST RADIATE THROUGH OUR LIVES AND OUR MISSION**

On the morning of Thursday, October 19, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed executives of the Armenian Ecclesiastical Brotherhood to the temporary Prelacy offices in Encino. Also participating in the meeting was Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian, who is the Prelate's representative at the Ecclesiastical Brotherhood.

During the meeting, the Brotherhood executives briefed the Prelate on their current and future activities. The Prelate commended their devotion to the Armenian Apostolic Church, as well as their role in the spiritual nourishment of Armenian youth, and subsequently reaffirmed the Prelacy's support to the Ecclesiastical Brotherhood.

The Prelacy has a history of collaboration with the Brotherhood including, but not limited to, Prelacy clergy members visiting the center of the Brotherhood to lecture to the faithful. In keeping with the collaborative tradition, the members requested that the Thanksgiving event they are planning for November 20 be held under the auspices of the Prelate. Furthermore, on the evening of Saturday, October 21<sup>st</sup>, Very Rev. Fr. Barthev Gulumian will be lecturing to the youth at the Brotherhood's center on the Armenian Church and Halloween.